ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„С-ПЕТЕРБУРГСКІЯ ВѢДОМОСТИ“ ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ:

—

Թիւրքիայի ներքին գործերի դրութիւնը աւելի և աւելի վատանում է: Կ. Պօլսից ստացած վերջին տեղեկութիւններին նայելով, Բասսօրայում արաբների ապստամբութիւնը ան աստիճան սաստկացաւ, որ սկսում է Թիւրքաց կառավարութեանը սաստիկ անհանգստացնել: Նա (Թիւրքաց կառավարութիւնը) տեղեկութիւն ստացաւ Բաղդադից, որ ապստամբները շրջապատել էին Թիւրքաց զօրքերի չորս գնդին և կտրել ոչնչացրել էին նրանց: Հաստատում են, թէ սուլթանը փորձում էր այն միջոցը գործ դնել, որը նրան աջողվեցաւ Զէյթունի մահմետականների ապստամբութեան ժամանակ, բայց այս դէպքում յաջողութիւն չունեցաւ: Այսպէս, սուլթանի պալատից հեռագիր ուղարկվեցաւ ապստամբների առաջնորդ Մանսուրին, որի մէջ թէ նրան և թէ նրա կուսակիցներին առաջարկված էր ներումն, խոստացված էին փողեր, շքանշաններ, և արդիւնաբեր տեղեր: Մինչև այժմ Մանսուրը արհամարհանքով մերժեց բոլոր այս առաջարկութիւնները: Ինչպէս երևում է բոլոր արաբական տարրը ձգտում է թօթափել իրանից սուլթանի իշխանութիւնը: Դրանից լաւ չէ գործերի դրութիւնը Հայաստանում, որտեղից հեռագիրները հեռագրների ետևից յայտնում են, որ քիւրդերի կողոպուտները և բռնաբարութիւնները նորոգվեցան այն աստիճան, որ ժողովուրդը սկսում է համբերութիւնը կորցնել: Դրա նման մէկ հեռագիր Վանից կարճ, բայց ազդու կերպով հաղորդում է. «Թիւրքերը կողոպտում են և սպանում են հայերին: Սարսափը պատել է ամենքին: Միթէ հայ լինելը յանցանք է: Օգնեցէք մեզ:»

Այժմ քիւրդերի նորոգված յափշտակութիւնները և աւազակութիւնները Հայաստանում յիշեցնում են բօլգարական կոտորածի օրերը, որոնք պատճառ դարձան 1877 թւի պատերազմի և բօլգարական իշխանութեան ստեղծվելուն: Հայոց խնդիրը յարուցված էր Բերլինի կոնգրեսի առջև, բայց թողեցին նրան ապագայ ժամանակին, տալով Բերլինի դաշնագրութեան յայտնի յօդուածը՝ հայ ժողովրդի վիճակի բարեկարգութեան անհրաժեշտութեան մասին: Երկու տարվայ ընթացքում հայ ժողովրդի բարեկարգութեան համար ոչինչ չէ ձեռնարկված, և այս ժողովրդի դէմ քրդերի սկսած կողոպուտները և բռնաբարութիւնները բնական հետևանք են կառավարութեան անփոյթութեան Բերլինի դաշնագիրը իրագործելու մէջ: Անգլիական դեսպան սըր Հէնրի Լայարդը ճշմարիտ ասած է երևում: Անցեալ տարի, իր մէկ պաշտօնական հեռագրի մէջ, նա նախազգուշացնում էր, որ անտես առնելով հայ ժողովրդի վիճակը և թողնելով նրան քիւրդերի և Թիւրքաց փաշաների կամայականութեան տակ, կը ստեղծվի «Հայոց խնդիրը», որ շատ կարելի է, աւելի ցաւալի հետևանքներ կունենայ Օսմանեան կայսրութեան համար, քան թէ 1877 թւի բօլգարական հարցը:

Քիւրդերը ոչ միայն կողոպտում և սպանում են հայերին, այլ և արգելում են նրանց ցանել իրանց դաշտերը, հետևաբար, պատրաստում են նոր և աւելի կատարեալ կերպով ներկայ տարվայ սարսափելի սովը, որի թըշուառութիւնները հեռացնելու համար դեռ նորերումս հայցվում էր Եւրոպայի բարեգործութիւնը: Եթէ նորերումս հարիւրաւոր մարդիկ Հայաստանում մեռնում են սովից, մինչև անգամ մարդակերութեան դէպքեր կային, ուրեմն ինչ պէտք է լինի, եթէ սովը կրկնվի մէկ երկրում, որ քանդված է պատերազմներով, փաշաների հարկահանութիւններով, քիւրդերի կողոպուտներով, երաշտութեամբ: Բայց երբ եւրոպական պետութիւնները կամենում են միջոցներ գտնել այդ թըշուառութիւնների դէմ, նրանք յամառ և չէզոք ընդդիմադրութեան են պատահում Կ. Պօլսի պաշտօնական աշխարհից: Ասում են, որ պ. Հէնրի Լէյարդ, չը նայելով իր բոլոր աշխատութիւններին՝ մտցնել տալ րէֆօրմներ Թիւրքիայում և կատարել Բերլինի դաշնագիրը, միայն մի քանի բարձր աստիճանաւորներ կարողացաւ արձակել տալ: Ասում են, չէ ծնվել դեռ այնպիսի մի մարդ, որ կարողանար յաղթել սուլթանի հակառակութեանը՝ նրա կայսրութեան ներքին կազմակերպութեան մէջ րէֆօրմների մտցնելու: Այս խոլորի պատճառը, ասում են, այն է, որ հարկ ու պատշաճ, սիստեմատիկական, անպայման ճընշում չէ եղել սուլթանի, նրա մինիստրների և նրա պալատի վրա: Թիւրքաց սուլթանի և նրա կառավարութեան հակառակութիւնը ծագում էր Բօսֆօրի ափերի վրա մեծ պետութիւնների մէջ եղած թշնամութիւնից: Գլադստօնը, հասկանալով եւրոպական դիպլօմատիայի անաջողութեան պատճառը Թիւրքաց հետ ունեցած կռւի մէջ, ձեռք տուեց ընդհանուր համաձայնութեանը, առանց նոր պատերազմի ամենքին ցանկալի արևելեան խնդրի վճռին հասնելու համար: Բայց այս փորձը վերջին ծիգն կը լինի Եւրոպայի կողմից գոնէ անունով պահպանել Բօսֆօրի ափերի վրա սուլթանի իշխանութիւնը: Եթէ նա չի հասկանայ հիմնված նրան ցոյց տուած պաշտպանութիւնը, եթէ արաբների աճող ապստամբութիւնը, հայ ժողովրդի քիւրդերից քարուքանդ լինելու հետ, կը մեծացնեն Թիւրքաց թագաւորութեան դժուար դրութիւնը, որը իր եւրոպական կալուածների մէջ ամեն կողմից շրջապատված է անհաշտ թշնամիներով, այն ժամանակ սուլթանի կայսրութեան քայքայումը հսկայական քայլերով առաջ կերթայ և ոչինչ բան չէ կարող արգելել այս գործողութեանը: Թիւրքերը առաջ էլ չէին կազմում այնպիսի մէկ ամուր շաղախ (цементъ), որը կարողանար օսմանեան կայսրութեան մէջ գտնվող մահմետական և քրիստոնեայ ազգութիւնները շաղկապել, իսկ 1877 թւի ջարդից յետոյ, այդ ցեմէնտը այն աստիճան փշրվեցաւ և մանրացաւ, որ նրա բոլոր մասերը, թէ Եւրոպայում և թէ Ասիայում սկսեցին բաժան բաժան լինել և իրանց փրկութիւնը բացառապէս միայն իրանց ինքնավարական դրութեան մէջ որոնել:

ԳՕՇԵՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԹԱՆԻ ՀԵՏ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ հեռագիրը:

Սուլթանը ընդունեց անգլիական դեսպան Գօշենին: Դեսպանը յայտնեց, որ ինքը եկել է Կ. Պօլիս ժամանակաւորապէս, մի առանձին յանձնարարութիւն կատարելու համար: Նա ասաց թէ ինքը հաւատացած է, որ Բերլինի կոնգրեսից յետոյ անվճիռ մնացած հարցերը վերջապէս այս կարճ ժամանակամիջոցում կը վերջանան: Սուլթանը յիշեց, որ Անգլիայի և Թիւրքիայի մէջ վաղ ժամանակներից մինչև այժմ հաստատ բարեկամութիւն է եղել և հաւատացնում էր դեսպանին, որ անփոփոխ է մնացել նրա կառավարչական գործունէութիւնը վերանորոգութիւններ մտցնելու և Բերլինի դաշնագրի համեմատ անվճիռ մնացած հարցերը վերջացնելու վերաբերութեամբ: Սուլթանը ոչինչ առանձին խոստմունքներ չը տուեց և իր վրա պարտաւորութիւններ չը դրեց: Բ. Դուռը վճռել է հետևել Անգլիային ընդդիմադրելու քաղաքականութեանը: Մինիստրների և բարձր աստիճանաւորների մեծ խորհրդի ժամանակ վճռված է, որ Թիւրքաց կառավարութիւնը չը պէտք է համբերէ օտար հզօր ազդեցութիւն Թիւրքաց գործերի վրա, մի և նոյն է ազդողը մի պետութիւն կը լինի, թէ մի քանիսը միասին: Բ. Դուռը պատրաստել է պետութիւններին ուղղած մի շրջաբերական, որով նա մտադիր է Կ. Պօլսի մէջ եղած դեսպանների միաբան դրութեան առաջն առնել: Թիւրքաց այդ շրջաբերականի մէջ ասված է, որ Բ. Դուռը Չերնօգօրիայի սահմանների վերաբերութեամբ պատւով կատարեց իր պարտաւորութիւնը և արդէն խնդրեց պետութիւններից, որ նրանք քննող մասնաժողով նշանակեն: Յունաստանի վերաբերութեամբ նա յայտնեց հաշտող դիտաւորութիւններ, բայց չէ կարող ընդունել Յունաստանի անհիմն պահանջները: Թիւրքաց կայսրութեան եւրոպական նահանգների մէջ վերանորոգութիւններ մտցնելու համար նախագիծ է պատրաստված, որ կը յանձնվի Արևել. Ռումելիայի գործերը կարգադրող հիւպատոսական մասնաժողովին քննելու համար: Հայաստանի վերաբերութեամբ շրջաբերականը լռում է և այդ լռութեամբ կարծես մերժում է, հակառակ Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի, պետութիւնների իրաւունքը Փոքր-Ասիայի գործերի մէջ խառնվելու համար, իսկ այդ յօդուածը պարտաւորեցնում է Բ. Դուռը վերանորոգել Հայաստանի վարչութիւնը:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից:

Ներկայումս Վիէննայի խօսակցութիւնների առարկան և օրվայ խնդիրը աւստրիական կայսրի Պրագա ուղևորվելն է կազմում: Տեղական պաշտօնական շրջանները աշխատում են հաւատացնել հասարակութեանը, որ կայսրը գնացել է Չեխիա և Մօրավիա բացառապէս զինուորական դիտաւորութեամբ, զօրքերը քննելու համար, բայց այդ լուրը բոլորովին ճիշտ չէ:

Չեխիան այժմ կռիւների ասպարէզ է դարձել գերմանացիների և չեխերի համար: Գլխաւոր գործողութիւնը կատարվում է Պրագայի մէջ: Եթէ կայսրը այսպիսի ժամանակ ուղևորվում է Պրագա, այդ կը նշանակի, որ նա քաղաքական նպատակներ ունի: Այդ ենթադրութիւնը արդարանում է և այն ձևերով, որով նրան ընդունում է ժողովուրդը:

Տաաֆէի մինիստրութիւնը դեռ ևս ոչինչ աջողութիւն չէ ունեցել: Ազգային կրքերը վառված են, չեխերի և գերմանացիների թշնամութիւնը հետզհետէ սաստկանում է: Գերմանացիները ասում են, որ կամենում են նրանց ճնշել և որ նրանց սահմանադրութիւնը վտանգի է ենթարկված: Այժմեան մինիստրութիւնը իրանց համար կորստաբեր համարելով, գերմանացիները ամեն կերպ աշխատում են նրան վնասել: Րէյխսրատի մէջ առաջ գերմանացիները շատ առիթներ ունէին կառավարութեան ընդդիմանալու և հակառակվելու համար: Գերմանական կուսակցութիւնը չափազանց ուժեղ էր Րէյխսրատի մէջ: Երբ այդ կուսակցութեան մի անդամ յարձակվում էր կառավարութեան վրա, նրա խօսքերը ծափահարութիւններով էին ծածկվում: Րէյխսրատի փակվելուց յետոյ գերմանացիները մասնաւոր կերպով ընդդիմադրում էին կառավարութեանը: Գերմանական մեծ և փոքր քաղաքների հասարակութիւններից յուսահատ բողոքներ են ստացվում մինիստրական օրէնքի նախագծերի և կարգադրութիւնների դէմ: Վիէննան այդպիսի բողոքների գլխաւոր կենտրոնն է կազմում: Այդ տեղ ամենը և ամեն բան բողոքում են մինիստրութեան դէմ և գանգատվում են նրանից: Ինչ կը վերաբերի գերմանական մամուլին, բոլոր միջոցներով աշխատում է վնասել Տաաֆէի մինիստրութեանը: Այդ բոլորը անվում է գերմանականութիւնը և սահմանադրութիւնը պաշտպանելու նպատակով:

Առհասարակ Աւստրիան այժմ բաւական անմխիթար դրութեան մէջ է: Մի կողմից գերմանացիները իրանց կուսակցութիւնները սահմանադրական անուանելով, համարում են իրանց ազատութեան և սահմանադրութեան պաշտպաններ, ուշադրութիւն չը դարձնելով այն հանգամանքի վրա, որ ազատութիւն բառը ոչինչ նշանակութիւն չունի նրանց համար, քանի որ իրանք ամեն կերպ աշխատում են գերմանացնել և ճնշել փոքր ազգութիւններին, միւս կողմից սլավեանները որոնց մէջ ազատամիտ տարր կայ, կղերականների հետ ձեռք ձեռքի տուած են գնում: Վերջին երկու կուսակցութիւնների բարեկամութիւնը երկարատև չէ կարող լինել, որովհետև նրանց շահերը միմեանց հակառակ են:

Ասում էին, որ Տաաֆէի մինիստրութիւնը պէտք է հեռանար գործերից: Այժմ յայտնվել է, որ նա դիտաւորութիւն չունի հրաժարական տալու, որովհետև կայսրը համակրում է նրա քաղաքական ուղղութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական պաշտօնական լրագիրներից մէկը հաղորդում է, որ այժմեան կառավարութիւնը յայտնել է իր պարտականութիւնը մասնակցել Բերլինի լրացուցիչ կոնֆերենցիային յունիսի 15-ից յետոյ: Կոնֆերէնցիայի նախագծի համեմատ, նա մի ուրիշ մասնաժողով կը նշանակէ յոյն-թիւրքական սահմանները որոշելու համար և կարգադրութիւններ կանի այդ մասնաժողովի անդամների ապահովութեան համար:

—«Րէյտերի ընկերութեանը» հեռագրում են Կ. Պօլսից, որ Բ. Դուռը քննում է մի շրջաբերական, որ պէտք է ուղարկվի եւրոպական պետութիւններին և որը Թիւրքաց կայսրութեան մէջ վերանորոգութիւններ մտցնելու խոստմունքներ կը պարունակէ: Ֆրանսիական դեսպանի փոխանորդ պ. Տիսօ իր կառավարութենից դեռ չէ ստացել հրահանգներ այն դրութեան մասին, որ նա պէտք է ընդունէ Թիւրքաց կառավարութեան վերաբերութեամբ:

—Լօնդօնում հրատարակվող «Daily Telegraph» լրագիրը Կ. Պօլսից ստացել է մի հեռագիր, որ հաղորդում է, թէ Թիւրքաց մինիստրների վերջին խորհուրդի ժամանակ Լօնդօնի Թիւրքաց դեսպան Մուսուրուս-փաշա մեկնել է, որ Անգլիան մտադիր չէ պետութիւնների համաձայնութիւն կայացնել Թիւրքաց կայսրութիւնը ոչնչացնելու նպատակով: Ընդհակառակը Անգլիան ցանկանում է Թիւրքիայի հզօրութիւնը և այդ հանգամանքը ի նըկատի ունենալով, վճռեց ստիպել սուլթանին, որ նա իրագործէ Բերլինի դաշնագրի անկատար մնացած վճիռները, իսկ այդ վճիռների անկատար մնալը վտանգաւոր է Թիւրքիայի համար:

—«Polit. Corresp.» լրագրին Հռօմից հեռագրում են, որ վերջին ժամանակներում պետութիւնները բանակցում են արևելեան խնդրի վերաբերութեամբ մի համաձայնութիւն կայացնելու նպատակով: Իտալական, գերմանական և աւստրօ-ունգարական կառավարութիւնների մէջ այդ հարցի վերաբերութեամբ կատարեալ համաձայնութիւն է տիրում: Իտալական և աւստրօ-ունգարական կառավարութիւնների յարաբերութիւնները վերջին ժամանակներում չափազանց բարեկամական են:

—«Րէյտերի ընկերութեանը» հաղորդում են Կ. Պօլսից, որ պ. Գօշէն ստիպված կը լինի մաքառել շատ դժուարութիւնների դէմ, որովհետև Բ. Դուռը վճռել է ընդդիմանալ նրա գրեթէ բոլոր պահանջներին: Առաջին դժուարութիւնը եւրոպական մասնաժողովի վերաբերութեամբ կը լինի:

—Փարիզից «Վօլֆի ընկերութեանը» հաղորդում են, որ պատգամաւորների ժողովի անդամների կարծիքով 1881 թւականի բիւջէտը չի քննվի ժողովի նիստերի ներկայ շրջանի ժամանակ: Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ Դիւֆօր մըտադիր է զանազան ժողովների ազատութեան օրէնքի նախագիծ ներկայացնել:

—Կաբուլից «Daily News» լրագրին հեռագրում են, որ Խանաբադից հասել է Կաբուլ անգլիական սուրհանդակը: Նա բերել է Աբդուրախման-խանի նամակը, որ շատ բարեկամական է: Առ ժամանակ ոչինչ չէ վճռած, միայն բանակցութիւններ են շարունակվում խաղաղութեան պայմանների մասին: